

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Քիմիա և կենսաբանություն

3, 2011

Химия и биология

**Կ Ե Ա Ա Ր Ա Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ**

УДК 543.73 + 546.3 + 282.2

Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ա. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Կ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. Հ. ՄԻՆԱՍՅԱՆ

**ՄԵՂՐԻԳԵՏ, ՈՂՋԻ ԵՎ ԱՐԾՎԱՆԻԿ ԳԵՏԵՐԻ ԾԱՆՐ ՄԵՏԱԳՆԵՐՈՎ  
ԵՎ ԱԼՅՈՒՄԻՆՈՎ ԱԴՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԻճԱՆԸ**

Հայաստանի տարածքում Մեղրիգետ, Ողջի և Արծվանիկ գետերը ընկած են հանրապետության հարավում՝ Սյունիքի մարզի՝ Մեղրու և Կապանի տարածաշրջաններում:

Այս տարածաշրջաններում կեղտաջրերի մաքրման կայանները վաղուց արդեն չեն գործում, կոյուղատար համակարգի որոշ հատվածները գտնվում են անմիտապես վիճակում, իսկ պոչամբարների մի մասը լցվել է, և կեղտաջրերը չենթարկվելով մաքրման՝ թափանում են գետերի քանի որ, այս տարածաշրջաններն աչքի են ընկնում զարգացած լեռնամետալորդիական արդյունաբերությամբ, հետևաբար մարդկային գործունեության ազդեցությունը տարածաշրջանների վրա արտահայտվում է հիմնականում ծանր մետաղների (ԾՄ) ներմուծմամբ ջրահավաք ավազաններ, իսկ վերջիններից էլ՝ գետերի ջրեր [1]:

ԾՄ դասվում են կենսաբանորեն կայուն միկրոտարրերի շարքին և հանդիսանում են ջրահավաքայի հիմնական աղտոտիչներ՝ ցուցաբերելով տոքսիկ, ուռուցքածին և մուտագեն հատկություններ [2]:

ԾՄ թափանցելով ջրային միջավայր կուտակվում են ջրային օրգանիզմների հյուսվածքներում և օրգաններում ու անցնելով սննդային շրա կարող են կուտակվել մարդու օրգանիզմում, առաջացնելով թունավորում կամ մահ [3, 4]:

Հետազոտության նպատակն է եղել՝ որոշել Մեղրիգետ, Ողջի և Արծվանիկ գետերի ԾՄ և ալյումինով աղտոտվածության աստիճանը:

**Նյութեր և մեթոդներ:** Հետազոտության օբյեկտներ են հանդիսացել Մեղրիգետ, Ողջի և Արծվանիկ գետերը: Նմուշները վերցվել են 2008–2009 թթ. յուրաքանչյուր սեզոն Ողջի գետի 4 տարրեր դիտակներից (1,7 կմ՝ Քաջարան քաղաքից վերև; 1,7 կմ՝ Քաջարան քաղաքից ներքև; 0,8 կմ՝ Կապան քաղաքից վերև; 6,8 կմ՝ Կապան քաղաքից ներքև), Մեղրիգետի 2 տարրեր դիտակներից (0,5 կմ՝ Մեղրի քաղաքից վերև, գետաբերան) և Արծվանիկ գետի գետաբերանից: Այլումնին, երկար, պղինձ, մանգան, քրոմ, մոլիբդեն, կաղմիում, կապար, ցինկ, արսեն, նիկել, վանադիում, սելեն տարրերի որոշումն իրականացվել է մաս-սպեկտրոմետրիկ մեթոդով ELAN 9000 ICP մասսավեկտրոմետրով՝ ինդուկցիոն կապված պլազմայով: Անալիզի ժամանակ օգտագործվել է կրկնակի թորած ինազմկաված ջուր: Որպես կրիչ գազ, կիրառվել է 99,998% մաքրությամբ արգոն [5]:

**Արդյունքներ և քննարկում:** ԾՄ և ալյումինի պարունակության տվյալները Սեղրիգետ, Ողջի և Արծվանիկ գետերի ջրերում՝ բերված են աղյուսակում:

Ելնելով աղյուսակի տվյալներից՝ 2008 թ. Ողջի գետում, ԾՄ և ալյումինի միջին տարեկան պարունակությունը՝ ըստ աճման կարգի, ունի հետևյալ տեսքը՝  $Pb < Cd < As < Ni < Se < V < Cr < Cu < Mo < Zn < Mn < Al < Fe$ , իսկ 2009 թ.՝ հետևյալ հաջորդականությունը՝  $Pb < Cd < Ni < V < As < Se < Cr < Zn < Cu < Mn < Mo < Al < Fe$ :

*Ծամր մետաղների և ալյումինի միջին տարեկան պարունակությունը Սեղրիգետ, Ողջի և Արծվանիկ գետերի ջրերում (մգ/լ)*

Ծանր մետաղ	2008 թ.			2009 թ.		
	Ողջի գետ	Արծվանիկ գետ	Սեղրիգետ	Ողջի գետ	Արծվանիկ գետ	Սեղրիգետ
Se	0,00191	0,00259	0,00601	0,00191	0,00166	0,00049
V	0,00221	0,00332	0,00119	0,00130	0,00343	0,00090
Cd	0,00056	0,00516	0,00004	0,00041	0,00222	0,00004
Cr	0,00454	0,00118	0,00149	0,00232	0,00855	0,00097
As	0,00070	0,00067	0,00177	0,00144	0,00276	0,00124
Zn	0,04805	0,31358	0,00513	0,02245	0,09324	0,00426
Pb	0,00037	0,00128	0,00061	0,00025	0,00016	0,00070
Ni	0,00097	0,00130	0,00106	0,00117	0,00204	0,00073
Mo	0,04262	0,26382	0,01625	0,08417	0,49494	0,00904
Mn	0,07212	0,45483	0,00993	0,04150	0,20436	0,01161
Cu	0,04110	0,02725	0,00460	0,02461	0,00974	0,00323
Fe	0,21314	0,40712	0,15090	0,12340	0,10959	0,15701
Al	0,17039	0,35033	0,13192	0,11280	0,11936	0,17831

Ողջի գետում 2008-2009 թթ. կուտուր-կենցաղային ջրօգտագործման ՍԹԿ-ն (մգ/լ) գերազանցվել է ալյումինի (0,04), երկարի (0,5), մանգանի, ցինկի (0,01), պղնձի, քրոմի, վանադիումի և սելենի (0,001) դեպքերում:

2009 թ. Ողջի գետում՝ համեմատած 2008 թ.-ի հետ, ըստ աճման կարգի՝ հաջորդականության մեջ էական փոփոխություններ չեն դիտվել:

Արծվանիկ գետի ջրերում՝ ըստ աճման կարգի, 2008 թ. դիտվել է ԾՄ և ալյումինի պարունակության հետևյալ հաջորդականությունը՝  $As < Cr < Pb < Ni < Se < V < Cd < Cu < Mo < Zn < Al < Fe < Mn$ , իսկ 2009 թ. հետևյալ հաջորդականությունը՝  $Pb < Se < Ni < Cd < As < V < Cr < Cu < Zn < Fe < Al < Mn < Mo$  (տես աղյուսակ):

Ոստի կարելի է փաստել, որ 2008 թ. համեմատությամբ՝ 2009 թ. Արծվանիկ գետի ջրերում դիտվել է արտենի, քրոմի և մոլիբդենի պարունակության ավելացում:

Արծվանիկ գետում 2008–2009 թթ. կուտուր-կենցաղային ջրօգտագործման ՍԹԿ-ն (մգ/լ) գերազանցվել է ալյումինի, երկարի, պղնձի, մանգանի, մոլիբդենի (0,5), ցինկի, քրոմի, կադմիումի (0,005), վանադիումի և սելենի դեպքերում:

Ելնելով աղյուսակի տվյալներից՝ 2008 թ. Սեղրիգետում, ԾՄ և ալյումինի միջին տարեկան պարունակությունը՝ ըստ աճման կարգի ունի հետևյալ տեսքը՝  $Cd < Pb < As < Se < Ni < V < Cr < Cu < Zn < Mn < Mo < Al < Fe$ , իսկ 2009 թ.՝ հետևյալ հաջորդականությունը՝  $Cd < Pb < Ni < V < Cr < As < Cu < Zn < Se < Mn < Mo < Al < Fe$ :

Ոստի կարելի է փաստել, որ 2008 թ. համեմատությամբ՝ 2009 թ. Մեղրիգետի ջրերում դիտվել է սելենի պարունակության ավելացում:

Մեղրիգետում 2008–2009 թթ. կուլտուր-կենցաղային ջրօգտագործման ՍԹԿ-ն գերազանցվել է այլումինի, պղնձի, մանգանի, ցինկի, քրոմի, վանադիումի և սելենի դեպքերում:

Հատկանշական է այն փաստը, որ պղնձի պարունակությունը Մեղրիգետ, Ողջի և Արծվանիկ գետերում ՍԹԿ-ն գերազանցել է ուսումնասիրված բոլոր դիտակետերում ուսումնասիրության ողջ ընթացքում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ըստ Մեղրիգետ և Ողջի գետերի հոսքի՝ ջրերում նկատվել է ԾՍ և այլումինի պարունակության աճ Քաջարան, Կապան և Մեղրի քաղաքներից հետո: Դա բացատրվում է Մեղրիգետ և Ողջի գետերի ջրերի քիմիական կազմի ձևավորման վրա՝ նշված քաղաքների կենցաղային կեղտաջրերի և արդյունաբերական ձեռնարկությունների թափոնների ազդեցությամբ: Ողջի գետի ջրերում դիտվել է ԾՍ և այլումինի պարունակության բոհշքային աճ հատկապես Կապան քաղաքից հետո, որը ենթարկվում է ոչ միայն կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերի ազդեցությանը, այլ նաև Արծվանիկ գետի ճնշմանը: ԾՍ աղտոտվածության ամենաբարձր աստիճանը ուսումնասիրված գետերի ջրերում դիտվել է Արծվանիկ գետի գետաբերանում՝ պոչամբարից ներքև՝ պայմանավորված արդյունաբերական կեղտաջրերի զգալի ազդեցությամբ, որն էլ իր ազդեցությունն է ունեցել Ողջի գետի ջրերի որակի վրա, մասնավորապես Կապան քաղաքից հետո:

Մեղրիգետի ջրերում 2008 թ. համեմատությամբ՝ 2009 թ. դիտվել է ԾՍ և այլումինի պարունակության նկատելի աճ, ինչը հավանաբար պայմանավորված է Մեղրիգետի ջրահավաք ավազանի տարածում տնտեսության զարգացմամբ:

Ելնելով վերը քննարկվածից կարելի է փաստել, որ ուսումնասիրված գետերի ջրերը աղտոտված են այլումինով և ԾՍ, սակայն պայմանները կրիտիկական չեն և նրանք առայժմ չեն սպանում շրջակա միջավայրի քննակշռության առողջությանը: Այս տարածաշրջանում հոսքաջրերի հեռացման ու մշակնան պաշշաճ մակարդակ ապահովելու և շրջակա միջավայրի հետագա աղտոտումից խոսափելու համար առաջարկվում է վերակառուցել գոյություն ունեցող հոսքաջրերի մաքրման կայանները և կառուցել նորերը, իրականացնել հոսքաջրային ցանցերի վերականգնում և տեխնիկական վերասարքավորում, ինչպես նաև աշխատակազմի ուսուցում:

*Էկոլոգիայի և բնության պահպանության ամրիում, ԵՊՀ  
Շրջակա միջավայրի վրա ներգործության  
մոնիթորինգի կենտրոն*

*Ստացվել է 19.01.2011*

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Մանայան Մ.Գ., Գրիգորյան Ա.Թ., Պոսոսյան Ա.Հ. Սյումիքի մարզ (քննությունը, քննակշռությունը, տնտեսությունը): Եր., ԵՊՀ հրատ., 2002, 155 էջ:
- More T.G., Rajput R.A. and Bandela N.N. Environ. Sci. Pollut. Res., 2003, v. 22, p. 605–616.
- Соловых Г.Н., Минакова В.В., Карнаухова И.В., Павловская В.В. Вестник ОГУ, 2009, № 6, p. 348–350.

4. Agbozu I.E., Ekweozor I.K.E. and Opuene K. International Journal of Environmental Science and Technology, 2007, v. 4, p. 93–98.
5. Clasceri L.S., Greenberg A.E., Eaton A.D. Standart Methods for Examination of Water and Wastewater. 20<sup>th</sup> edition. Washington, 1998.

Г. А. ГЕВОРКЯН, А. А. ДАНИЕЛЯН, К. В. ГРИГОРЯН, С. Г. МИНАСЯН

## УРОВЕНЬ ЗАГРЯЗНЕНИЯ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ ТЯЖЕЛЫМИ МЕТАЛЛАМИ И АЛЮМИНИЕМ В РЕКАХ МЕГРИГЕТ, ВОХЧИ И АРЦВАНИК

### Резюме

Были изучены уровень загрязнения окружающей среды тяжелыми металлами (ТМ) и алюминием в реках Мегригет, Вожчи и Арцваник. Водные образцы, взятые в различных точках рек в течение 2008–2009 гг., были проанализированы на Al, Fe, Cu, Mn, Mo, Ni, Pb, Zn, As, Cr, Cd, V, Se. Исследования показали, что высокие концентрации ТМ и Al в рр. Вожчи и Мегригет наблюдались после городских районов. Самый высокий уровень концентрации ТМ выявлен в водах р. Арцваник, что также оказывало влияние на качество воды реки Вожчи. ПДК для культурно-бытового водопользования в течение 2008–2009 гг. был превышен в исследованных реках в случаях Al, Fe, Cu, Mn, Mo, Zn, Cr, Cd, V и Se.

G. A. GEVORGYAN, A. A. DANIELYAN, K. V. GRIGORYAN, S. H. MINASYAN

## POLLUTION LEVEL OF THE MEGHRIGET, VOUGHCHI AND ARTSVANIK RIVERS WITH HEAVY METALS AND ALUMINIUM

### Summary

This study involved the level of pollution with heavy metals and aluminium in the rivers of the Meghriget, Voghchi and Artsvanik. Water samples collected from different sites of the rivers during 2008–2009 were analyzed for Al, Fe, Cu, Mn, Mo, Ni, Pb, Zn, As, Cr, Cd, V, Se. Researches shown that high concentrations of the heavy metals and aluminium in the Voghchi and Meghriget rivers were observed after urban areas. The highest concentration of heavy metals was observed in the Artsvanik river waters which had its impact on the quality of the Voghchi river waters. The maximum permissible concentration (MPC) of aluminium, iron, copper, manganese, molybdenum, zinc, chromium, cadmium, selenium and vanadium was exceeded for culture-domestic water use in the studied river during 2008–2009.